Վլադիմիր Ղազախեցյան

Զանգեզուրի ինքնապաշտպանությունը[1]

Խորհրդային Հայաստանի կազմավորումը պետք է փոխեր Ադրբեջանի վերաբերմունքը, վերջ տար նրա նվաճողական նկրտումներին ինչպես Զանգեզուրի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի ու Նախիջևանի նկատմամբ: Ադրբեջանի վերաբերմունքի շրջադարձը, թեկուզ և ձևականորեն, սպասեցնել չտվեց:

Հայաստանի խորհրդայնացման մասին հեռագիրը ստանալու և քննարկելու կապակցությամբ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի միացյալ նիստը հեղկոմի նախագահ Ն.Նարիմանովին հանձնարարեց հեղկոմի անունից կազմել հռչակագիր՝ նշելով, որ Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի միջև այլևս սահման գոյություն չունի, Զանգեզուրը և Նախիջևանը անցնում են Հայաստանին, Ղարաբաղի լեռնային մասին տրվում է ինքնորոշման իրավունք: Նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկոմն ընդունեց տվյալ հռչակագիրը, որը դեկտեմբերի 2-ին հրապարակվեց Բաքվի «Կոմունիստ» թերթում: 1920 թ. նոյեմբերի 30-ի հռչակագրի ընդունման մասին Ադրբեջանի հեղկոմն իր նախագահի և արտգործժողկոմի ստորագրություններով ազդարարեց «Բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն» դիմումով, որում Լեռնային Ղարաբաղին վերաբերող որոշումը տարբերվում էր հռչակագրից: «Այսօրվանից,- կարդում ենք դիմումում,- վերացված են հայտարարվում սահմանների մասին վեճերը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են ՀԽՍՀ մասեր»: Որոշում-դիմումը տպագրվել է Երևանի «Կոմունիստ» թերթում դեկտեմբերի 7-ին:

Բաքվի խորհրդի՝ Հայաստանի խորհրդայնացմանը նվիրված հանդիսավոր նիստում ևս Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն.Նարիմանովը հրապարակեց հռչակագիրը՝ Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք տալու տարբերակով: Հռչակագրի երկու տարբերակները կրկնվել են շատ անգամ, բազմաթիվ փաստաթղթերում, բազմաթիվ ղեկավար գործիչների կողմից: Ավելի էական է, սակայն, ոչ թե հռչակագրի մեջ տեղ գտած հակասության խնդիրը, այլ այն վերաբերմունքը, որ դրսևորեց Ադրբեջանն իր իսկ որոշման նկատմամբ այն հրապարակելուց հետո: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, հռչակագիրն ընդունվել էր ոչ թե իրականացնելու, այլ Հայաստանի խորհրդայնացումը հեշտացնելու, դաշնակցականների իշխանությունը «զինաթափելու» համար, այլ կերպ ասած՝ այն միայն ապահովելու էր խորհրդային իշխանության մուտքը Հայաստան:

Հայաստանի խորհրդայնացումը քաղաքական նոր իրադրություն ստեղծեց Զանգեզուրի ինքնապաշտպանության հեռանկարների համար: Այժմ երկրամասի շահերի պաշտպանությամբ, ընդդեմ Խորհրդային Ադրբեջանի, հանդես էր գալու նաև Խորհրդային Հայաստանը: Ինչ վերաբերում է Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի

---

[1] Հայոց պատմություն, հատոր IV, գիրք I: Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան, 2010, «Զանգակ» հրատարակչություն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 339-353:

30-ի հռչակագրին՝ Զանգեզուրը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը Հայաստանի մաս ճանաչելու մասին, ապա երկրամասի ինքնապաշտպանական ուժերը, Գ. Նժդեհի գլխավորությամբ, չվստահեցին դրան և որոշեցին սպասողական դիրք գրավել ու շարունակել գոյամարտը: 1920 թ. վերջերին (նոյեմբերին) Զանգեզուրի պաշտպանները վճռական հաղթանակներ էին տարել Ադրբեջանի և ռուսական կարմիր բանակի նկատմամբ՝ ազատագրելով ամբողջ երկրամասը:

Հայաստանի խորհրդայնացումից մի քանի շաբաթ անց՝ 1920 թ. դեկտեմբերի 25-ին, Տաթևի վանքում տեղի ունեցավ համազանգեզուրյան առաջին համագումարը, որում գլխավորը Խորհրդային Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի հարցն էր: Ամփոփելով Զանգեզուրում խորհրդային իշխանության 5-ամսյա (1920 թ. հուլիս-նոյեմբեր) գործունեության արդյունքները և նկատի ունենալով, որ ավելի քան 3 տարի Զանգեզուրն ապրել է իր ներքին ուրույն կյանքով և շարունակելու է մնալ նույն դրության մեջ, համագումարը որոշեց. «Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար՝ մտցնելով հանրապետական իրավակարգ, լինելով անկախ, մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ»[2]:

«Ինքնավար Սյունիքի» հռչակման անհրաժեշտությունը և «մինչև» հասկացության իմաստը բացատրել է Գ. Նժդեհը 1923 և 1925 թթ. հրատարակած հոդվածներում: Հայաստանի Հանրապետության անկումից հետո, գրել է նա, երբ կարմիր բանակի հրամանատարության հետ իր բանակցությունները մնացին անհետևանք, երբ կարմիրները, «շլացած Երևանի կամովին խորհրդյանացումից», մերժեցին հաշտության իր առաջարկած նախնական պայմանները, ստիպեցին Սյունիքը հայտարարել անկախ: «Սյունիքը չէր կարող տեղի տալ, քանի դեռ տաճկական զորքերը գտնվում էին Ալեքսանդրապոլում, Շարուրում և Նախիջևանում, միշտ պատրաստ՝ ցանկության դեպքում արհամարհելու Երևանի բոլշևիկյան ուժերը և շարժվելու Սյունիքի դեմ»[3]:

Այսպիսով, եթե մինչև Հայաստանի խորհրդային դառնալը Զանգեզուրը նպատակ էր՝ պայքարելու Ադրբեջանի հավակնություններից պաշտպանվելու համար, ապա դրանից հետո նա վերածվեց միջոցի՝ ստիպելու, որ խորհրդային իշխանությունն ընդունի իր պայմանները, խորհրդային բանտերից ազատելու հայ մտավորականներին, ինչպես նաև կանխելու խորհրդա-քեմալական հետագա հնարավոր վտանգը Հայաստանի նկատմամբ:

Տաթևի համագումարն ընդունեց Ինքնավար Սյունիքի, այսպես կոչված, սահմանադրությունը, որն անվանվում էր «Կառավարության ձևի գլխավոր գծեր»: Ըստ դրա՝ բարձրագույն օրենսդիր մարմինը խորհուրդն էր (խորհրդարանը)՝ որպես ընտրովի մարմին: Տվյալ պահին համագումարը հայտարարվեց օրենսդիր: Գործադիր մարմինն ընտրվում էր խորհրդարանի անդամներից և ոչ անդամներից՝ 6 ամիս

---

[2] Համազանգեզուրյան առաջին համագումարի որոշումներն ու բանաձևերը տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 658-667:

[3] Ղազախեցյան Վ., Նժդեհը Զանգեզուրում. 1920թ. վերջ- 1921թ. հուլիս, Երևան, 2001, էջ 9:

ժամկետով, 9 հոգուց բաղկացած, որը ղեկավարելու էր երկրի զինվորական ու քաղաքացիական բոլոր գործերը: Խորհրդարանն էր նշանակում և արձակում զինվորական ընդհանուր հրամանատարին, պատերազմ հայտարարում, հաշտություն կնքում՝ արտակարգ դեպքերում դա վերապահելով նաև սպարապետին:

Վարչական տեսակետից Սյունիքը բաժանվում էր 6 շրջանների՝ Բուն Զանգեզուր, Տաթևի ձոր, Ղափան, Դարաբասի ձոր, Սիսիան և Գենվազ: Շրջանում իշխանությունը պատկանում էր գործադիր մարմնին՝ 3-5 անդամով, դարձյալ 6 ամիս ժամկետով: Նրանց վերապահված էր շրջանների ներքին հարցերի լուծումը, որոնք չունեին համապետական նշանակություն: Շրջանային գործադիր մարմինն ուներ իր մասնաճյուղերը՝ ներքին գործերի, պարենավորման և զինվորական: Շրջանը (գավառակը) ուներ իր գավառապետը և շրջանային կոմիսարները, որոնց իր կազմից ընտրում էր շրջանային գործադիր մարմինը և հաստատում խորհրդարանի դիվանը: Գյուղը կամ համայնքն ուներ գյուղական կոմիսար, որոշ տեղերում՝ նաև կոմիսարի օգնական: Նրանք ընտրվում էին գյուղական հասարակության և համայնքի կողմից և հաստատվում շրջանային գործադիր մարմնում: Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմինը վերահսկում էր պետական հիմնարկությունների գործունեությունը: Համագումարի առանձին միաձայն որոշմամբ ազատարար և հերոս Գարեգին Նժդեհը հրավիրվեց որպես Սյունյաց սպարապետ: Համագումարը գաղտնի քվեարկությամբ ընտրեց դիվանի (կառավարության) 8 անդամներին: Գենվազը, որի ներկայացուցիչները տեղ չհասան համագումարին մասնակցելու համար, ընտրելու էր դիվանի 9-րդ անդամին: Ինքնավար Սյունիքի իշխանության կենտրոնատեղին Գորիսն էր: Ինքնավար Սյունիքի դիվանի (կառավարության) նախագահ ընտրվեց Գեդեոն Տեր-Մինասյանը:

Համազանգեզուրյան համագումարը որոշումներ ընդունեց նաև արտաքին հարաբերությունների հարցերի վերաբերյալ: «Զանգեզուրը միշտ ձգտել է և ձգտում է լինել մայր երկրի՝ Հայաստանի Հանրապետութեան անբաժան մասը, - արձանագրել է համապատասխան բանաձևը,- բայց նկատի առնելով Հայաստանի վերջին քաղաքական փոփոխութիւնները, որ նա ստիպւած մի շարք քաղաքական անբարեյաջող հանգամանքներից յայտարարել է իրեն խորհրդային, մի իրաւակարգ, որի հետ երբեք չէ կարող հաշտուել մեր ժողովուրդը, համագումարը որոշեց մինչեւ նրա՝ այդ իրաւակարգից բաժանուելը գործել սեպարատ և ապրել ուրոյն կեանքով»[4]:

Մինչև 1920թ. դեկտեմբերի 25-ը հակառակորդից ազատագրված Զանգեզուրը ղեկավարում էր 7 մարդուց բաղկացած գյուղացիական ժամանակավոր խորհուրդը:

Համագումարից հետո (1921թ. փետրվարի 23-ին) հրապարակվեց Ինքնավար Սյունքի կառավարության առաջին կոչը՝ ուղղված «Հայ ժողովրդին», որում հիմնավորվում էր երկրամասի ինքնավարության հռչակումը, և մեծարվում՝ Գ. Նժդեհի սպարապետությունը:

---

[4] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 620-628:

Փետրվարի 21-ին Գորիսի Ս. Լուսավորիչ եկեղեցում հանդիսավոր իրադրության մեջ օծվել էր սպարապետին հանձնվող գոտին և եռագույն դրոշը, որը դարձյալ նա էր ընդունել։

Հայաստանի իշխանությունները քանիցս փորձեր են արել դադարեցնելու զանգեզուրցիների պայքարը, որոնցից մեկը կապվում է Դրոյի անվան հետ։ 1920 թ. դեկտեմբերի 16-ին Զանգեզուրի գյուղացիությանը և Գ. Նժդեհին հեռագրով կոչ է ուղարկվել՝ զինվորական կոմիսար Ավիսի և կարմիր զորքերի հրամանատար Դրոյի ստորագրությամբ։ Հայտնի է Դրոյի նաև երկրորդ դիմումը «Զանգեզուրի գյուղական կոմիտեին, պատճենը՝ Նժդեհին»։ Ժամանակը և տեղը՝ 21 հունվարի, 1921 թ. Բաքու, երբ Դրոն, հեռացվելով պաշտոնից, գտնվում էր Մոսկվա «պատվավոր աքսոր» մեկնելու ճանապարհին։ Խորհրդային իշխանությունն իր քաղաքական նպատակների համար օգտվել է Դրոյի ծառայությունից ինչպես այդ, այնպես էլ այլ դեպքերում (օրինակ՝ Դրոյի և մյուսների ստորագրությամբ 1923 թ. «Մարտակոչ» թերթում հրապարակված «Դաշնակցության կովկասյան խմբերի դեկլարացիան»)։

Մասնավորապես երկրորդ դիմումում առաջարկվում էր Զանգեզուրն անմիջապես հայտարարել խորհրդային և միանալ Խորհրդային Հայաստանին[5]։ Դրոյի նամակը տեղ է հասցրել հեղկոմի և 11-րդ կարմիր բանակի միացյալ պատվիրակությունը (5 հոգուց բաղկացած)՝ Գրիգոր Վարդանյանի և փոխգնդապետ Արմենակ Օրբելյանի ղեկավարությամբ։ Փետրվարի 2-ին Գ. Նժդեհը հանդիպում է ունեցել նախ Ա. Օրբելյանի, ապա Գ. Վարդանյանի հետ։ Հանդիպման վերջում Գ. Նժդեհը հայտարարել է, որ կառավարության գրավոր պատասխանը կտրվի՝ հանձնելու Հայաստանի հեղկոմին, 11-րդ կարմիր բանակի հրամանատարությանը, Ռուսաստանի արտգործժողկոմ Գ.Չիչերինին և Դրոյին։ Փետրվարի 5-ին, ստանալով Ինքնավար Սյունիքի խորհրդարանի դիվանի նախորդ օրվա պատասխանը, պատվիրակությունը վերադառնում է Բաքու, որտեղից էլ մեկնել էր։ «Ինքնավար Սյունիքի կառավարությունը,- նշվում է գրության մեջ,- լինելով գերազանցորեն ժողովրդական, առանց ժողովրդի հավաքական կամքի ու ցանկության չի կարող անմիջապես պատասխանել նրան։ Դրոյի նամակի ուղղությամբ նա կտնտղի ժողովրդի տրամադրությունը և կամքը՝ աշխատելով հնարավորության սահմաններում շուտափույթ կերպով պատասխանել այդ գրությանը»[6]։ Այդ պատասխանը, սակայն, ձգձգվեց, մինչև վրա հասավ փետրվարի 18-ի հեղաշրջում-ապստամբությունը, երբ այլևս դրա կարիքը չկար։ Մի քանի անգամ ևս կողմերը միմյանց դիմեցին փոխադարձ հարց ու պատասխանով՝ տալով բացատրություններ ու հիմնավորումներ առաջադրված մեղադրանքներին։

Զանգեզուրի իշխանությունները, բացահայտորեն դեմ չարտահայտվելով խոհրդայնացումը, միաժամանակ որոշակի վերաբերմունք չէին դրսևորում խորհրդայնացման հարցի նկատմամբ՝ դա վերապահելով երկրամասի ժողովրդին, նրա համագումարին։ Իրականում Զանգեզուրի իշխանությունների կողմից

---

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց.2, գ. 70, թ. 29։

[6] Նույն տեղում, թ. 30։

սպասողական դիրք գրավելն ու հարցի լուծման ձգձգումն ինչպես այդ, այնպես էլ այլ դեպքերում մարտավարություն էին, որի հիմքում Հայաստանի անկախ պետականության վերականգնման հույսերն էին։

Փետրվարի 18-ը եկավ որոշակիություն ու պարզություն մտցնելու տրամադրություններում՝ ընդդեմ Զանգեզուրի խորհրդայնացման։

Հայաստանի կենտրոնական շրջաններում ապստամբության բռնկումը զուգադիպեց Զանգեզուրի ինքնապաշտպանների կարևոր հաջողության՝ Դարալագյազի գրավման հետ։ Դարալագյազը ռազմավարական նշանակություն ուներ Ինքնավար Սյունիքի և ՀՓԿ-ի համար՝ որպես նրանց կապող օղակ։ Կապի այդ միջոցը միակն էր, քանի որ անկարելի էր օգտվել Նախիջևանի ուղուց։

Դարալագյազի՝ պատմական Վայոց ձորի գրավումը իրականացրին Սյունիքի արևմտյան ճակատի զինված ուժերը, որոնց հրամանատարն էր Յապոնը։ Կարմիր բանակի զորամասերը չկարողացան նույնիսկ դիմադրություն կազմակերպել, ավելին՝ տվեցին շուրջ 900 գերի, գրավվեց մեծաքանակ ռազմավար։

Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանը փետրվարի 20-ին Գ. Նժդեհին հրավիրեց պաշտոն ստանձնելու Երևանում, ինչպես նաև մի քանի հարյուր զանգեզուրցի-ղարաբաղցի մարտիկներ բերելով՝ ամրապնդել ժողովրդի բարոյական ոգին։ Հրավերը և օգնության խնդրանքը Ս. Վրացյանը կրկնեց նաև հետագա օրերին, երբ ապստամբների դրությունը դառնում էր անհուսալի։ Հայտնի է, որ մարտի 18-ի նամակը, որը հասցեատիրոջը չէր հասել, ճանապարհին բռնվել էր և այնուհետև տպագրվել բոլշևիկյան «Կոմունիստ» թերթում։ Ս. Վրացյանը կարծում էր, որ Հայաստանի զինված ուժերի գլուխ պետք է կանգնի Գ. Նժդեհի նման ժողովրդականություն վայելող անձը, որպեսզի կարելի լինի դիմել վճռական քայլերի։ Ս. Վրացյանը մի այլ նամակով Գ. Նժդեհին, նաև Յապոնին դիմեց մարտի 25-ին, երբ սկսվում էր կարմիր բանակի զորքերի վճռական հարձակումը ապստամբական ուժերի վրա։ Երևան-Դարալագյազ-Զանգեզուր գծի՝ որպես հնարավոր նահանջի ուղու բացումը Ս. Վրացյանը համարում էր կենսական ու անհետաձգելի։ «Ազատ Հայաստան» թերթը մարտի վերջին օրերին հայտնում էր, թե Դարալագյազից ու Զանգեզուրից մայր Հայաստանին օգնության եկող հայկական զորքերը կապ են հաստատել Ղամարլուի ճակատում գործող իրենց զորամասերի հետ։ Այնուամենայնիվ եկել էր Հայրենիքի փրկության կոմիտեի վերջը։ Ապրիլի 2-ին բազմահազար գաղթականությունը և փոքրաթիվ զորքը բռնեցին նահանջի ճանապարհը դեպի Զանգեզուր։

Չնայած Դարալագյազի գրավումից հետո զանգեզուրցիների օգնությամբ ռազմական հաջողություններ ձեռք բերվեցին նաև Ղարաբաղում, բայց դա ուներ միայն անցողիկ նշանակություն։ Խոսքը Թևանի (Թևան Ստեփանյան) ապստամբության մասին է, որին 1921 թ. գարնանը օգնության էին գնացել Գ. Նժդեհի 4 վաշտեր՝ փոխգնդապետ Տեր-Ստեփանյանի ղեկավարությամբ։ Ազատագրվել էին Դիզակի, Վարանդայի և այլ շրջաններ։ Զանգեզուրյան վաշտերը, սակայն, ստիպված եղան ապրիլին ուժեղ մարտերով ետ քաշվել։ Նահանջը ղեկավարում էր Գարեգին Ամիրջանյանը՝ Գ. Նժդեհի նշանավոր հրամանատարներից մեկը։

Ռազմական տեսակետից Ինքնավար Սյունիքի համար ծանր վիճակ ստեղծեց նաև Դարալագյազի անկումը, որը կարմիր զորքերը գրավեցին ապրիլի15-ին՝ հյուսիսից ընդհուպ մոտենալով Սիսիանին ու Գորիսին։

ՀՓԿ պարտությունը և մեծաթիվ գաղթականության՝ դեպի Զանգեզուր նահանջն առաջացրին նոր խնդիրներ։ Նախ լուծարվեց ՀՓԿ-ն, և նրա փոխարեն ստեղծվեց փոքրակազմ կառավարություն՝ Ս. Վրացյանի ղեկավարությամբ, որն օգնելու էր տեղական իշխանություններին գաղթականության, տարհանման և այլ խնդիրներով։ Իսկ նահանջած ռազմական ուժերը, ամբողջ հրամանատարությունը դրվեցին սպարապետ Գ. Նժդեհի տրամադրության տակ։ Կ. Թարխանյանը նշանակվեց սպարապետի տեղակալ։

Ստեղծված կացությունը թելադրում էր որոշակի հարաբերություններ հաստատել Պարսկաստանի հետ։ Ապրիլի 26-ին Գ. Նժդեհը գրավոր դիմեց պարսից շահին օգնություն ցույց տալու խնդրանքով։ Լեռնահայաստանի սպարապետը խնդրում էր Թավրիզում ժամանակավոր ապաստան տալ Երևանից գաղթած հայ մտավորականներին, որոնց թիվը հասնում էր շուրջ 500-ի, «մինչև որ հանգամանքները թույլ տան նրանց կրկին անգամ վերադառնալ իրենց հայրենիք»։ Ընդ որում Գ. Նժդեհը բացատրում էր նաև իր պայքարի նշանակությունը Պարսկաստանի պաշտպանության տեսակետից։ Վերջնականապես մաքրելով Լեռնահայաստանը բոլշևիկներից, գրել է Գ. Նժդեհը, «մի կուռ բանակ կազմող ժողովուրդը» միաժամանակ պաշտպանում է Պարսկաստանի հյուսիսային սահմանները բոլշևիկների ներխուժումից[7]։ «Մեծանուն զորավար Նժդեհին» պատասխան նամակում Թավրիզի Մեհտի խանը շահի անունից փոխանցել է, որ պատրաստ է մատուցելու «ամեն մի ծառայություն, ինչ որ վայել է Ձեր անվան վեհությանը»[8]։

Նոր իրադրության պահանջով ապրիլի 26-ին դարձյալ Տաթևում հրավիրվեց Լեռնահայաստանի ժողովրդական ներկայացուցիչների երկրորդ համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էր 95 պատգամավոր։ Համագումարը որոշում ընդունեց Ինքնավար Սյունիքը հռչակելու Լեռնահայաստան։ Նման անվանափոխությունը կարծես մրցակցում էր «Խորհրդային Հայաստանի» հետ և պետք է որ անհանդուրժելի լիներ վերջինի ղեկավար շրջանների համար։ Այդ «մարտահրավերը» պետք է ավելի սրվեր մի քանի օր անց կատարված նոր անվանափոխությամբ։

Համագումարը վարչապետ ընտրեց Գ. Նժդեհին՝ նրան հանձնարարելով նոր կառավարության կազմումը։ Կառավարության անդամը կոչվելու էր նախարար։ Այն հաստատվեց 7 նախարարի կազմով՝ ընդգրկելով նաև Երևանից նահանջած կադրերին։ Նախարարապետը և արտաքին գործերի ու զինվորական նախարարը Գ. Նժդեհն էր։ Կառավարության մեջ մտան Ս. Մելիք-Յոլչյանը, Ա. Օհանջանյանը, Հ. Տևեճյանը, Հ. Տեր-Հակոբյանը, բժ. Մինասյանը, բժ. Եղիազարյանը և Գ. Տեր-Մինասյանը։ Նախարարապետ Գ. Տեր-Մինասյանը։ Նախարարապետ Գ. Նժդեհին շնորհվեց

---

[7] Տե՛ս Գէորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), էջ 157։

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 158։

զորավարի աստիճան, և նա պարգևատրվեց «Խուստուփյան արծիվ» երկաթե շքանշանով: Երկրորդ համագումարը, ինչպես և առաջինի դեպքում, իրեն հռչակեց Լեռնահայաստանի խորհրդարան[9]: Նույն օրը խորհրդարանը ողջունեց զորքին ու նրա հրամանատարներին՝ նրանց մաղթելով նոր հաղթանակներ: Համագումարի ավարտից մի քանի օր անց հրապարակվեց «Լեռնահայաստանի կառավարության դեկլարացիան», որում շարադրված էին նրա խնդիրները ներքին կյանքում և արտաքին հարաբերություններում: Լեռնահայաստանի իշխանությունները Գորիսում կազմակերպեցին Հայաստանի անկախության օրվա՝ մայիսի 28-ի տոնակատարությունը:

Չնայած պետականության այդ արտաքին և ձևական բոլոր նշաններին՝ նրա իրական դրությունը բարդ էր և գնալով ավելի էր ծանրանում: Երևանից հազարավոր մարդկանց գաղթը անլուծելի խնդիրներ ստեղծեց տնտեսական ոլորտում: Հացի խիստ պակասը չէր թուլանում Պարսկաստանից ստացվող չնչին միջոցներով: Ինչ վերաբերում է արտաքին դրությանը, ապա քաղաքացիական պատերազմի ավարտից և Երևանում խորհրդային իշխանության վերահաստատումից հետո այն նույնպես ծանրացավ, ուժեղացավ ճնշումը նրա վրա ինչպես խաղաղ, այնպես էլ ոչ խաղաղ միջոցներով և՛ Խորհրդային Հայաստանի, և՛ կարմիր բանակի կողմից: Առայժմ գերապատվությունը տրվում էր խաղաղ միջոցներին՝ բանակցություններին:

Ապրիլի 2-ին՝ Երևանը գրավելուց հետո, կարմիր բանակի զորամասերը փորձեցին հետապնդել նահանջող ուժերին և մարտական գործողությունները փոխադրեցին Դարալագյազ՝ առաջադրանք ունենալով գրավել այն և փակել Երևանից նահանջողների ճանապարհը, որոնց թվում կային նաև հազարավոր խաղաղ քաղաքացիներ:

Դարալագյազի վրա հարձակումը, որ սկսվեց ապրիլի 12-ին, կատարվեց երկու ուղղությամբ. արևմուտքից՝ Բաշ Նորաշենից (հայկական զորամասեր և 180-րդ գունդ) և հյուսիսից՝ Նոր Բայազետ- Սելիմի լեռնանցք գծով (ռուսական 18-րդ դիվիզիայի զորամասեր): Ապրիլի 15-ին հայկական զորամասերն առաջինը մտան Դարալագյազի կենտրոն Քեշիշքենդ (Եղեգնաձոր): Իսկ ապրիլի 19-ին 18-րդ դիվիզիայի հրամանատարությունը շնորհակալություն հայտնեց անձնակազմին Սելիմի լեռնանցքը հերոսաբար հաղթահարելու և Դարալագյազի գրավմանը մասնակցելու համար[10]: Կարմիր զորքերն ընդհուպ մոտեցան Զանգեզուրի սահմաններին և ժամանակավորապես դադարեցրին ռազմական գործողությունները: Այնուամենայնիվ առաջադրված խնդիրը կատարվեց ոչ ամբողջությամբ: Չհաջողվեց կանխել գաղթականության երթը, որն արդեն մտել էր Զանգեզուր:

Կարմիր բանակը նախապատրաստվում էր ռազմական գործողությունները զարգացնել՝ Զանգեզուրի հարցը լուծելու համար: Բանակի հրամանատարության մշակած պլանի (24 ապրիլի) համաձայն՝ նախատեսվում էր Զանգեզուրը չորս կողմից վերցնել աքցանի մեջ և ջախջախել նրա ուժերը: Միաժամանակ բանակի

---

[9] Տե՛ս Նժդեհ Գ., Երկեր, հ. 2, Երևան, 2002, էջ 150-153:

[10] Տե՛ս ԲՀԱ, 1980, թիվ 2, էջ 61:

հրամանատարությունը գտնում էր, որ մինչև ռազմական գործողությունները «պետք է փորձել Զանգեզուրի խռովությունը վերացնել խաղաղ ձևով»[11]: Ապրիլի վերջերին Դարալագյազում կազմավորվեց Արևմտյան ճակատը՝ Սպարապետի օգնական Կուռո Թարխանյանի հրամանատարությամբ խորհրդային ուժերին դիմակայելու համար[12]:

Խորհրդային իշխանության նախաձեռնությամբ մայիսի 12-ին Սիսիանի շրջանի Ղալաջուղ գյուղում տեղի ունեցան բանակցություններ: Խորհրդային պատվիրակության մեջ էին Արտաշես Կարինյանը և Վասիլի Մելնիկովը (բանակի ներկայացուցիչ): Զանգեզուրի կողմը ներկայացնում էին Գ. Տեր-Մինասյանը, Մինաս Մինասյանը և Լևոն Միքայելյանը:

Ա. Կարինյանը բանավոր ներկայացրեց Խորհրդային Հայաստանի պահանջները: Հակառակ կողմը պահանջեց դրանք ձևակերպել գրավոր, որը և արվեց նույն օրվա հաջորդ նիստում:

Լեռնահայաստանի կառավարությունը 2 օր անց՝ մայիսի 14-ին, որոշեց և մայիսի 16-ին խորհրդային պատվիրակությանը հայտնեց, որ Լեռնահայաստանի խորհրդայնացման խնդիրը դուրս է իրենց կառավարության իրավասությունից, «որպէս երկրի եւ բովանդակ ժողովուրդի քաղաքական բախտի տնօրինումն, մի հարց, որ ժողովուրդի գերագոյն իրաւունքն է եւ պէտք է որոշի ինքը ժողովուրդը, որի համար կըհրաւիրուի Լեռնահայաստանի համագումար, ուր եւ քննութեան կ՚առնուեն այդ հարցը եւ մեր բանակցութիւնների հետեւանքները»[13]:

Սակայն համագումարն այլևս չկայացավ: Նշանակում է՝ չկայացավ և Լեռնահայաստանի պատասխանն ըստ էության: Ընդհանրապես Գ. Նժդեհի ու նրա շրջապատի, առավել ևս Ս. Վրացյանի կողմնակիցների մոտ նկատելի էր հարցի լուծումը ձգձգելը, որ խոստովանում են նաև իրենք:

Արշակ Հովհաննիսյանին (Ա. Արշակունի) ուղղված նամակում Ս. Վրացյանը գրել է, թե ըստ հնարավորության «բանակցությիւնները պէտք է ձգձգել եւս 2-3 շաբաթ, մինչեւ որ վերջնականապէս պարզ լինի միջազգային կացութիւնը, ինչպէս նաեւ նախիջևանցիների եւ ատրբէջանցիների հետ վարուելիք բանակցութիւնների արդիւնքը»[14]:

Զանգեզուրի դաշնակցականները, օգտվելով Քրդստանի Մինքենդի և Հաջիսամլուի շրջանների միջև գոյություն ունեցող թշնամությունից, Մինքենդի շրջանի քոչվորների սպառնալիքների դեմ պայքարելու և այլ նպատակով դիմել էին նաև Հաջիսամլուի շրջանի ղեկավար Սուլթան բեկ Սուլթանովին՝ վարել համապատասխան բանակցություններ:

Այսպիսով՝ Զանգեզուրի դաշնակցականները, բանակցությունների մեջ գտնվելով Խորհրդային Հայաստանի հետ և տանելով դրանք անընդհատ ձգձգելու

---

[11] Նույն տեղում, 1978, թիվ 1, էջ 148:

[12] Ճակատի կազմավորման և մարտական գործողությունների մասին տե՛ս Զանգեզուրի հերոսամարտը հրամաններում (1921թ.) Երևան, 2008, կազմողներ՝ Վ. Ղազախեցյան, Հ. Գևորգյան:

[13] Արշակունի Ա., Սիսեանի բանակցութիւնները.- Հայրենիք, 1926, թիվ 8, էջ 47:

[14] Նույն տեղում, թիվ 9, էջ 58:

մարտավարություն, միաժամանակ չէին բացառում արտաքին (թերևս, նաև միջազգային) նպաստավոր իրադրության դեպքում իրենց գործունեությունն ամրապնդելն ու շարունակելը, ավելի լայն խնդիրներ իրականացնելը կամ խորհրդային կողմին իրենց տեսակետից ավելի նպաստավոր պայմաններ (պահանջներ) ներկայացնելը: Այդ փորձերը, որից չհրաժարվեցին նաև հետագայում, դատապարտված էին անհաջողության ու ձախողման, քանի որ խորհրդային իշխանության դիրքերը գնալով ավելի էին ամրապնդվում:

Մայիսի 23-ին ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանը 11-րդ կարմիր բանակի հրամանատար Ա. Հեկկերի հետ ունեցած հեռախոսային զրույցում հայտնում է, որ առայժմ բանակցությունները կշարունակվեն, և որոնք, ըստ երևույթին, ձգձգվում են: Դա նշանակում էր, որ դեռևս պետք չէ դիմել ուժի միջոցի: Միաժամանակ Ա. Մյասնիկյանը խնդրում է մեկ դիվիզիա ուժեղացնել նյութական մասով[15], ինչը իր հերթին հարձակման նախապատրաստություն էր: Ընդ որում՝ Երևանի ուղղության զորքերի հրամանատարությունը հույսեր չէր տածում բանակցությունների նկատմամբ և գտնում էր, որ շուտով հարկ կլինի անցնել ռազմական գործողությունների:

Կառավարությունը լսեց պատվիրակության հաղորդումը բանակցությունների ընթացքի մասին: Արձանագրվեց, որ ըստ Զանգեզուրի, հարցի վերջնական լուծումը «տեղի է ունենալու նրա գյուղացիության ընդհանուր համագումարում, որի համար պահանջվում է ժամանակ»: Զանգեզուրը խոստացել էր դրված հարցին պատասխանել մի քանի շաբաթ հետո: Երևանի կառավարությունը որոշեց բանակցությունների հարցի հանգամանալի քննարկումը վերապահել ՀԿ(բ)Կ կենտկոմին, որը, Ա. Կարինյանի զեկուցումն ընդունելով ի գիտություն, մինչ այդ ստեղծել էր հանձնաժողով (Ա. Կարինյան, Ա. Մռավյան, Ս. Փիրումյան), որին հանձնարարվել էր պատրաստել զեկուցում և 3 օրվա ընթացքում ներկայացնել կոնկրետ առաջարկություններ: Մայիսի 23-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի պլենումը լսեց հանձնաժողովի զեկուցումը և ընդունեց հետևյալ որոշումը. «Հաստատել (հանձնաժողովի) դրույթները: Զեռնպահ մնալ շտապ հայտագիր ուղարկելուց մինչև Լեռնային Ղարաբաղի մասին հարցը ՌԿ(բ)Կ Կովկլասյան բյուրոյի առաջիկա պլենումում պարզելը»: Հայաստանի օգտին Ղարաբաղի հարցի լուծումը Գ. Նժդեհը համարում էր պայքարը դադարեցնելու անհրաժեշտ պայման: Կովկասյան բյուրոյի պլենումի սպասվող որոշումն ընդունվեց հունիսի 3-ին, որում նշված է. «Հայաստանի կառավարության հայտարարության մեջ մատնանշել Հայաստանին Լեռնային Ղարաբաղի պատկանելության մասին»[16]:

Ա. Մյասնիկյանի ստորագրությամբ Հայաստանի կառավարության համապատասխան հայտարարությունն ընդունվեց հունիսի 12-ին և հաջորդ օրը հայերեն, ռուսերեն ու ադրբեջաներեն լեզուներով հրապարակվեց մամուլում: Ադրբեջանի հեղկոմի հայտարարության (նկատի ունի 1920 թ. նոյեմբերի 30-ի դեկրետը) և Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների միջև կայացած համաձայնության հիման վրա, ասված է հայտարարության մեջ, հայտնվում է, որ

---

[15] Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան…, էջ 529-530:

[16] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 633.

«Լեռնային Ղարաբաղը այժմեանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մասը»[17]:

Հրապարակայնությունն ապահովելու նպատակով, որն անհրաժեշտ էր Զանգեզուրում շարունակվող պայքարը վերջացնելու համար, հայտարարությունը բազմացվեց և տարածվեց տպագիր ձևով:

Մինչև կառավարությունը կուսակցական այդ որոշումների ոգով կձևակերպեր իր պատասխանը, հունիսի 8-ին Գ. Նժդեհը ստորագրում է Խորհրդային Հայաստանի կառավարությանը հասցեագրած դիմում երկրամասը խաղաղորեն հայ բոլշևիկներին հանձնելու պայմանների մասին: Այդ պայմանները կարելի է ստորաբաժանել երկու խմբի. մեկը վերաբերում է Հայաստանում սոցիալ-տնտեսական ու քաղաքական վերափոխումներին, մյուսը՝ Զանգեզուրի համար առանձնահատուկ կարգավիճակ սահմանելուն[18]: Ըստ էության, այդ պայմանների զգալի մասն անընդունելի էր բոլշևիկների կուսակցության և խորհրդային իշխանության տեսանկյունից:

ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանը և ժողկոմխորհի նախագահության անդամները հունիսի 13-ին ստորագրեցին կառավարության հայտարարությունը, որը հանգամանորեն պատասխանում էր Զանգեզուրի կառավարության առաջարկությանը: Ելնելով կարևորությունից՝ խորհրդային կողմի պահանջը հունիսի 19-ին տպագրվեց «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում: Կառավարությունն ազդարարում էր, որ ընդունում է Զանգեզուրի պայմանները կամ եթե ոչ՝ տալիս է անհրաժեշտ բացատրություններ:

«Զանգեզուրի ապստամբությունը,- նշված է հայտարարության վերջում,- և նրա մեկուսացումը խանգարում են մեր հայրենիքի խաղաղ շինարարության գործին և նրա բոլոր հատվածների վերջնական միացմանը»: Ուստի ժողկոմխորհն «այլևս չի կարող հաշտվել հին դրության հետ և առաջարկում է Ձեզ (Լեռնահայաստանի կառավարությանը-խմբ.) անհապաղ տալ պարզ պատասխան այս պաշտոնական դիմումին»[19]: Կառավարության հայտարարությունն ուներ վերջնագրի բնույթ:

Ա. Մյասնիկյանի մեկ այլ հայտարարությունից երևում է, որ նրա ներկայացուցիչը ժամանակին մեկնած է եղել սահման՝ հայտարարության մասին հայտնելու «Զանգեզուրի ներկա իշխանություններին», ինչպես նաև շարունակելու բանակցությունները: Սակայն Զանգեզուրի ղեկավարները, չսպասելով դրանց, ձեռնարկեցին հարձակում խորհրդային զորքերի վրա:

1921 թ. կեսերին Զանգեզուրն ամբողջ Անդրկովկասում միակ տարածքն էր, որը, փաստորեն, պայքարում էր Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի ոտնձգությունների դեմ: Ուստի բոլոր միջոցներն օգտագործվում էին պայքարին վերջ տալու և ամբողջ Անդրկովկասում խորհրդային իշխանությունը հաստատելու համար: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ կովկասյան բյուրոյի պլենումի վերոնշյալ որոշումը ևս ոչ այնքան իրականացնելու, որքան Գ. Նժդեհի պայմանները

---

[17] Նույն տեղում, էջ 636:

[18] Տե՛ս Գէորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 173-174:

[19] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան…, էջ 532:

թեկուզ ձևականորեն կատարած ցույց տալու համար էր: Նույնպիսի նպատակ ունեին նաև այդ բանակցությունները, որոնք ընթացան Ռիգայում 1921թ. հունիս-հուլիսին ՀՅԴ և ՌԿ (բ)Կ կենտկոմի պատվիարկությունների միջև:

ՀՅԴ պատվիարկությունը ղեկավարում էր Վ. Փափազյանը: Բանակցություններն սկսվել էին ՀՅԴ նախաձեռնությամբ և նպատակ ունեին քննարկելու «ինչպես երկու կուսակցությունների փոխհարաբերությունների, այնպես էլ հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցեր»: ՌԿ(բ)Կ-ն, որի պատվիրակության ղեկավարը Բեռլինում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ադոլֆ Իոֆֆեն էր, և որի կազմում էր նաև Մոսկվայում ՀՍԽՀ ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը, ըստ արտգործժողկոմ Գ.Չիչերինի՝ նպատակ ուներ «տպավորություն ստեղծել Զանգեզուրի գյուղացիության մեջ», որտեղ շարունակվում էր ապստամբությունը, և պարզել մի շարք այլ հարցեր:

Հայաստանի ղեկավարությունը և ՌԿ(բ)Կ Անդրկովկասի երկրկոմը խիստ դեմ էին բանակցություններին: ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանը, Մոսկվա ուղարկած հեռագրում հիմնավորելով ՀԿ(բ)Կ և Հայաստանի կառավարության բացասական վերաբերմունքը, հայտնում էր, թե իբր դաշնակցականները որևէ ազդեցություն չունեն Հայասատանի աշխատավոր զանգվածների վրա, և որ, ընդհակառակը, «անսահման հակահեղափոխականության համար» ժողովուրդը նրանց չի ընդունում: Դաշնակցականները, փաստորեն, վերացրել են «Զանգեզուրի գործը խաղաղ ճանապարհով» լուծելու խորհրդային իշխանության ձգտումներն ու քայլերը, ուստի «դաշնակցականների կամքով Զանգեզուրի հարցն այսուհետև կլուծվի պատերազմով»:

Բանակցությունների արդյունքով նախապատրաստվել էր համաձայնության նախագիծ և նախաստորագրվել: Ընդ որում՝ խորհրդային պատվիրակությունն արել էր այնպիսի զիջումներ (Արևմտյան Հայաստանի տարածքների հարցի լուծում, ելքով դեպի ծով, հանուն Միացյալ Հայաստանի ստեղծման նույնիսկ Խորհրդային Հայաստանի ապախորհրդայնացում և այլն), որոնք որևէ կասկած չէին թողնում դրանց կեղծ լինելու հարցում: Որ դա այդպես է, վկայում է թեկուզ այն փաստը, որ Զանգեզուրի հարցի լուծումից անմիջապես հետո Մոսկվան դադարեցրեց ՀՅԴ-ի հետ բանակցությունները: Իսկ ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոն 1921 թ. հուլիսի 26-ին որոշեց «Ռիգայում դաշնակցականների վերաբերյալ ստորագրված համաձայնության նախագիծը վճռականապես մերժել»: Նույնիսկ փորձ արվեց հասնելու նրան, որ դաշնակցական պատվիրակների մոտ համաձայնագրի նախագծի օրինակ չմնա, սակայն դա ձախողվեց[20]:

---

[20] Տե՛ս Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1999, էջ 60-66: Սիմոնյան Հ., Վերջին փորձը. դաշնակ- բոլշևիկյան բանակցությունները Ռիգայում 1921թ. Armenian Review, 1991, h. 44, թիվ 2/174, էջ 53-70: Խաչատրյան Կ., Հայ- ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., էջ 100-105: Политбюро ЦК РКП (б)- ВКП(б). Повестки дня заседаний. 1919-1952, т. 1, Москва, 2001, с. 112.

ՀՍԽՀ ժողկոմխորհի հայտարարության ընդունման օրը՝ հունիսի 13-ին, Հայաստանի պատվիրակության ղեկավար Ա. Կարինյանը Յապոնի միջոցով դիմեց Լեռնահայաստանի կառավարությանը՝ բանակցությունները վերսկսելու և կառավարության պաշտոնական առաջարկությունը հանձնելու համար։ Փաստորեն, Զանգեզուրի կողմից առաջադրված պայմաններն ընդունվում էին կառավարության կողմից։ Պայմանների թվում դժվարինը, որ կախված չէր Հայաստանի կամքից, Ղարաբաղի հարցն էր, որը «լուծվում էր» ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի պլենումի հունիսի 3-ի որոշումով։

Սակայն խաղաղ բանակցային գործընթացին վերջ տրվեց այն բանից հետո, երբ հունիսի 15-ին Գ. Նժդեհը Դարալագյազում վերսկսեց ռազմական գործողությունները։ Այդ մասին որոշում էր ընդունվել մայիսի 29-ին Լեռնահայաստանի և Ս. Վրացյանի կառավարությունների անդամների խորհրդակցությունում։ Զանգեզուրը դեռևս ուներ զգալի ուժեր և ցանկություն ռազմական գործողությունների համար։ Կարմիր բանակի գործակալական տվյալներով՝ 1921 թ. մայիսի վերջի դրությամբ Գ. Նժդեհն ուներ հետևյալ ուժերը. մշտական զորքում կար 7-8 հազար մարդ (այդ թվում հաշվվում են նաև այդտեղ գաղթած արևմտահայերը)։ Բացի այդ զորքից, նշվում է տվյալ ամփոփագրում, պետք է նկատի ունենալ Զանգեզուրի ամբողջ գյուղացիությանը։ Գ. Նժդեհի շտաբը շարունակում էր գտնվել Գորիսում, իսկ ռադիոկայանը՝ Ղաթարի գործարաններում։ Փոխադրության միջոցը սայլերն էին։ Նշվում է նաև, որ ձախողվել է Մեղրիի մոտ Արաքս գետի վրա կամուրջ անցկացնելու փորձը, իսկ կառուցող ինժեները խեղդվել է գետում։ Զորքն ուներ 87 գնդացիր, մի քանի հրանոթ։ Գյուղացիները զինված էին ռուսական և ֆրանսիական հրացաններով։ Փամփուշտների պաշարը բավարար էր[21]։

Դարալագյազում կարմիր զորամասերը հանկարծակիի եկան, չհասցրին լուրջ դիմադրություն ցույց տալ Կուռոյի և Յապոնի հրամանատարությամբ գործող զորամասերին և անկանոն նահանջեցին դեպի Նախիջևան։ Մեծ կորուստներ տվեց նաև «Կրասնի տաբոր» ադրբեջանական ջոկատը, իսկ հայկական առաջին գունդը գերվեց (չկարողանալով անցնել գետը)։ Գնդի կոմունիստները գնդակահարվեցին։

Հայաստանի Հանրապետության Սպարապետի գլխավոր շտաբը հատուկ հաղորդագրությամբ (19 հունիսի, թիվ 15) տեղեկացնում էր գրավված գյուղերի և կարմիրների ամբողջ հրամանատարական կազմի ու 650 բանակայինների գերման մասին[22]։

«Այսպիսով, գրել է Ա. Բաղդասարյանը,- Նժդեհը, գտնելով, որ խորհրդային կառավարությունը չի կարող բավարարել իր պահանջը և ստիպված պիտի լինի Զանգեզուրի հարցը լուծել զենքի ուժով, վճռում է հարվածել Դարալագյազում, շարքից հանել հայկական զորամասերը, ապա ամբողջ ուժերով փոխադրվել Ղարաբաղ-

[21] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 15։
[22] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 1, թ. 3։

Զանգեզուրի ճակատ և Հայաստանի խորհրդային կառավարությանը թելադրել իր պահանջները»[23]:

Սակայն իրադարձությունները դասավորվում էին ոչ հօգուտ Լեռնահայաստանի պաշտպանների: Իրադարձությունների տվյալ համատեքստում Դարալագյազի գրավումը ոչ միայն արդարացված չէր, այլև կարելի է համարել սխալ ռազմական գործողություն՝ իր բոլոր ծանր հետևանքներով: Ուստի Դարալագյազը գրավողների ցնծությունը երկար չտևեց: Խորհրդային իշխանությունը, տեսնելով, որ բանակցությունները ձգձգվում են անվերջ և արհեստական կերպով, վճռեց անցնել հարցի ուժային լուծմանը՝ առիթ համարելով նաև Դարալագյազի արկածախնդրությունը:

Այն օրերին, երբ Ա. Մռավյանը, ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի 1921թ. հունիսի 3-ի որոշման համաձայն, մեկնում էր Լեռնային Ղարաբաղ՝ որպես Հայաստանի արտակարգ կոմիսար, նրա վրա դրվում է նաև պարտականություն Զանգեզուրի կապակցությամբ: Ճանապարհին Թիֆլիսում գտնվելու օրը՝ հունիսի 22-ին, նա հեռախոսային խոսակցություն է ունենում Ա. Մյասնիկյանի հետ: «Եղել եմ բանակի հրամանատարի մոտ,- հայտնում է Ա. Մռավյանը,- պայմանավորվել եմ հիմնական հարցերի կապակցությամբ: Մանդատը կստանամ վաղը: Մանդատով ինձ հանձնարարվում է Զանգեզուրի դեմ գործող (ուժերի) ընդհանուր քաղաքական ղեկավարությունը»[24]:

Քանի որ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը խոչընդոտեց Ղարաբաղի վերաբերյալ ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի հունիսի 3-ի որոշման կենսագործմանը, վերացավ նաև Զանգեզուրի վերաբերյալ Ա. Մռավյանին հանձնարարված խնդիրը:

Հունիսի սկզբից կարմիր բանակը նախապատրաստվում է ընդհանուր հարձակման: Հունիսի 6-ին առանձին կովկասյան բանակի ռազմահեղկոմը մշակում է այդ գործողությունների պլանը: Կովկասյան զորակազմի մարտական գործողությունները պետք է սկսվեին հունիսի 25-ին, բայց հետաձգվեցին մինչև հուլիսի 2-ը:

Նշված պլանի համաձայն՝ Երևանի ուղղության զորախմբին (հունիսի 18-ին) հրաման իջեցրեց նրա հրամանատար Մ. Վելիկանովը: Խնդիր էր դրվում կոտրելու Զանգեզուրի ապստամբների դիմադրությունը հարավից: Գլխավոր գործողությունները տեղի էին ունենալու Արևելյան ռազմաճակատում կովկասյան զորակազմի կողմից: Ապստամբների ուժերը ևս զգալի էին, սակայն մեծապես զիջում էին կարմիրներին: Հրամանատարն էր Կ. Թարխանյանը:

Ապստամբական կողմի ուշադրությունը Զանգեզուր- Ղարաբաղից և Երևանյան զորախմբից շեղելու նպատակով առաջին հայկական բրիգադը հունիսի 22-ին Քեշիշքենդի ուղղությամբ դիմեց հարձակման: Նույն նպատակով Նոր Բայազետից դեպի Սելիմի լեռնանցք հարձակման դիմեց 20-րդ դիվիզիայի հեծելազունդը՝

---

[23] Բաղդասարյան Ա., Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, էջ 97:

[24] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 145, թ. 81, 86:

հայկական բրիգադին միանալու համար։ Բրիգադի կազմում էր նաև 4-րդ գունդը, որը կազմավորվել էր Լոռու պարտիզանական գնդի հիման վրա։

Հարձակումից առաջ զորամասերին կոչով դիմեցին Ա. Մյասնիկյանը և Մ. Վելիկանովը՝ պահանջելով ցուցաբերել խիզախություն, չխնայել կյանքը Զանգեզուրը մայր Հայաստանի հետ միավորելու համար։ Հարձակման հաջորդ օրը խորհրդային ուժերը գրավեցին Քեշիշքենդը՝ վերցնելով 1750 գերի։

Դարալագյազի (Արևմտյան) ճակատի կազմալուծումը, որը բացում էր ճանապարհը դեպի Սիսիան, Գ. Նժդեհի կառավարությանը ստիպեց դիմել հաշտության առաջարկի։ Այդ նպատակով նա հունիսի 22-ին Գառնիկ Շահինյանին լիազորեց բանակցել Խորհրդային Հայաստանի կառավարության հետ։ Հունիսի 26-ին հաշտության առաջարկությունն արվեց խմբապետ Յապոնի միջոցով։

1921 թ. հունիսի 26-ին ՀԿ(բ)Կ կենտկոմը քննարկեց «Այսպես կոչված Զանգեզուրի կառավարության դիմումը խաղաղ բանակցությունները շարունակելու մասին» հարցը և որոշեց պատասխանել զինվորական հրամանատարության անունից՝ հակառակորդին առաջարկելով զենքերը վայր դնել և անձնատուր լինել։ Պատասխանի ձևակերպումը հանձնարարվել էր Ս. Լուկաշինին։ Հաջորդ օրը ՀԿ(բ)Կ կենտկոմն ընդունեց երկու որոշում Զանգեզուրի հարցի կապակցությամբ։ Առաջինը վերաբերում էր բանակցությունների համար Զանգեզուր ուղարկվող պատվիրակությանը, որը մեկնելու էր հունիսի 28-ին (Ս. Լուկաշին, Ա. Կարինյան կազմով)՝ հունիսի 26-ի որոշման պայմանները պաշտպանելով։ Երկրորդ որոշումը Զանգեզուրի խորհրդային իշխանության կազմակերպման մասին էր։ Զանգեզուրի արտակարգ լիազոր էր նշանակվում Պողոս Մակինցյանը, իսկ ժամանակավոր ներգործժողկոմ՝ Ա. Նուրիջանյանը։ Պ.Մակինցյանին հանձնարարվում էր ընտրել չվարկաբեկված զանգեզուրցի տասը պատասխանատու աշխատողներ։ Զանգեզուրի հեղկոմի նախագահ նշանակվեց Դրաստամատ Տեր- Սիմոնյանը, ով Գորիսի գրավումից անմիջապես հետո մեկնելու էր այնտեղ[25]։ ՀԿ(բ)Կ Զանգեզուրի գավառային կոմիտեի քարտուղար նշանակվեց Երեմիա Բակունցը։ Այդ որոշման ընդունումը նշանակում էր, որ Զանգեզուրի ազատագրման և խորհրդայնացման խնդիրը Երևանը լուծված էր համարում։ Հետևաբար բացառվում էր նաև հետագա բանակցությունների հնարավորությունը։

Խորհրդային կողմի պատասխանը հունիսի 30-ին Բաշ Նորաշենում հակառակորդի ներկայացուցիչներին հանձնեցին հայկական կարմիր բանակի ներկայացուցիչները։ Հայտարարությունը դատապարտում էր Գ. Նժդեհի ու Յապոնի հանկարծակի հարձակումը կարմիր բանակի վրա Դարալագյազում՝ այն պահին, երբ խորհրդային կողմը ներկայացնելու էր խաղաղության իր առաջարկները՝ պատճառ դառնալով «ներկայումս ծավալվող ռազմական գործողությունների»։ Հայաստանի աշխատավոր զանգվածների համար, նշվում է հայտարարության մեջ, հանցանք կլիներ «խաղաղության երկարաձիգ բանակցություններ վարելը», ուստի

[25] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 14։

կառավարությունը «հաստատ և անշեղ կերպով վճռել է կարճ ժամանակում վերջ դնել Զանգեզուրում մինչ այժմ գոյություն ունեցող դրությանը»[26]:

Այսպիսով՝ ռազմական գործողությունները շարունակվելու էին: Հունիսի 29-ին առանձին հրամանով նշվեց խորհրդային զորքերի մուտքը Զանգեզուրի սահմաններ:

Զանգեզուրի ինքնապաշտպանների դրությունը, ռազմական, քաղաքական ու տնտեսական տեսակետից, գնալով ծանրանում էր: Դա ճգնաժամի հասունացումն էր: Ինչպես նշում է Գ. Նժդեհը, իրադրությունն իրեն դրել էր երկընտրանքի առաջ: Վայոց ձորի (Դարալագյազի) «բարոյալքիչ դեպքից» հետո, գրում է նա, Սյունիքի ժողովուրդը և նրա ղեկավարն իրենց գտան «սուր երկընտրանքի» առաջ: «Տեղի տալու դեպքում մենք զոհաբերած կլինեինք երկամյա կռիվներում ձեռք բերված մեր անկախությունը, որը նպատակ չէր միայն, այլև միջոց: Կռիվը շարունակելու դեպքում հարկադրված պիտի լինեինք ժողովրդի ակտիվ տարրերը պահելու զենքի տակ, լեռների վրա, ասել է՝ հազարների սովամահությամբ ապրեցնել Սյունիքի անկախությունը, որն ստեղծված քաղաքական ընդհանուր դրության շնորհիվ դառնում էր անհնարին»[27]:

Գ. Նժդեհը ուշադրություն է հրավիրում մի հանգամանքի վրա ևս, որն ստեղծվել էր իր դեմ հայկական կարմիր բանակին ռազմաճակատ մտցնելով: «Թշնամին,- կրկնում է Գ. Նժդեհը,- գիտակցորեն կռիվներին տվել էր քաղաքացիական, եղբայրասպան բնույթ՝ համոզված, որ նման կռվի համար իր նետած ձեռնոցը չպիտի կարողանայինք վերցնել…»[28]:

Տեղի տալը, սակայն, միանգամից չկատարվեց: Որտեղ անհրաժեշտ էր, ինչպես Ղափանում, կազմակերպվում էր դիմադրություն՝ կազմակերպված նահանջի հնարավորություն ստեղծելու համար: Ընդ որում՝ քանի որ Գ. Նժդեհի հիմնական ուժը զանգեզուրցի գյուղացիական վաշտերն էին, դրանք անմիջապես կազմացրվում և մեկնում էին տները: Նահանջող ուժը, որ պետք է անցներ Պարսկաստան, հիմնականում կանոնավոր զորքն էր, Երևանյան զորամասերը և Գ. Նժդեհի այն կադրերը, որոնք իրենց մնալը ապահով չէին համարում՝ քաղաքական նկատառումներով:

Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը, ստանձնելով միջնորդի դեր Լեռնահայաստանի և Խորհրդային Հայաստանի միջև, հուլիսի 1-ին հեռագրում է Ա. Մյասնիկյանին, պատճենը՝ Նժդեհին: Առաջարկած միջնորդության և սկզբունքների ընդունումը կնշանակեր ավելորդ զիջումների գնալ Զանգեզուրին, երբ արդեն ռազմական տեսանկյունից նրա բախտը որոշված էր: Ուստի խորհրդային իշխանությունը այն մատնեց անուշադրության:

Հունիսի 30-ին կարմիր զորքերը հրաման ստացան՝ վերջնականապես Զանգեզուրը մաքրել Գ. Նժդեհի խմբերից և վերականգնել խորհրդային իշխանությունը: Դրանում նշվում էր, որ Գ. Նժդեհի գլխավոր ուժերը կենտրոնացած են Ղաթարի գործարաններում և Մեղրի գյուղում: Հուլիսի 1-ին Ա. Մյասնիկյանը և Մ.

---

[26] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան…, էջ 540-541:

[27] Նժդեհ Գ. Երկեր, հ. 2, էջ 173:

[28] Նույն տեղում:

Վելիկանովը մեկ անգամ ևս դիմեցին կարմիր բանակի զինվորներին ու սպաներին՝ խիզախորեն մարտնչել «դաշնակցական բախտախնդիրների» դեմ: Զանգեզուր արշավող «կարմիր ռազմիկներին» ողջերթի առանձին խոսք ուղղեց ռազմժողկոմ և առանձին կովկասյան բանակի ռազմխորհրդի անդամ Ա. Մյասնիկյանը: Այդ բանակի հրամանատարությունը հուլիսի 6-ին հրամայեց հակառակորդին ջախջախել Զանգեզուրում՝ թույլ չտալով, որ նա հեռանա Պարսկաստան: Մեղրին նախապես գրավելու առաջադրանքը կարմիրները կատարել չկարողացան, և զանգեզուրցիների նահանջի ուղին մնաց բաց:

Կարմիր բանակի վճռական հարձակման օրերին աշխուժացավ նաև Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը, նրանց օգնությունը կարմիր բանակի զորամասերին: «Կոմունիստների ընդհատակյա աշխատանքի շնորհիվ,- ասված է Կովկասում Ռուսաստանի լիազոր ներկայացուցչի հունիսի 30-ի տեղեկագրում.- հայ բնակչության միջավայրում զարգանում են հեղափոխական խմորումները, որոնց նպատակն է դաշնակցականների իշխանության տապալումը: Զանգեզուրի որոշ վայրերում կազմակերպվել են հեղկոմներ: Դաշնակցականները սահմանից հանում են զորքերը՝ ճնշելու համար ներսում աճող շարժումը»[29]: Տեղում բոլշիկյան բջիջների աշխատանքը ղեկավարում էին Հակոբ Կամարին, Երեմիա Բակունցը և ուրիշներ:

Հունիսի 30-ին երևանյան զորքերը գրավել էին ամբողջ Սիսիանի շրջանը՝ անմիջական վտանգ ստեղծելով Գորիսի համար, որտեղ հուլիսի 1-ին կայացավ Սյունիքի կառավարության նիստ՝ քննարկելու ստեղծված տագնապալի իրավիճակի հարցը: «Սիսիանի խորհրդայնացումով,- գրել է Գ. Նժդեհը,- կռիվներ վարելու հնարավորությունից պիտի զրկվեին նաև Դարաբասի, Տաթևի և բուն Զանգեզուրի շրջանները»: Կառավարության նիստը, հաշվի առնելով ստեղծված ընդհանուր դրությունը, որոշեց թողնել Գորիսը: Այդ մասին հեռախոսով հայտնելով Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատարին՝ նրան կարգադրվեց դիմադրություն ցույց տալ միայն այն դեպքում, երբ «կփորձեն Սյունիք մտնել թուրք և թաթար ուժեր, իսկ ռուս և հայ զորամասերի դեմ զենք չբարձրացնել»: Ընդունված որոշման մասին անմիջապես գրությամբ տեղյակ պահվեց Դարալագյազի խորհրդային իշխանություններին:

Հուլիսի 2-ին հայկական հեծելազունդը և կովկասյան զորակազմը գրեթե միաժամանակ մտան Լեռնահայաստանի կենտրոն՝ Գորիս: Հուլիսի 4-ին առանց կռվի նրանք գրավեցին Տաթևը և Դարաբասը: Ղափանում միաժամանակ գումարվեց Հայաստանի Հանրապետության կառավարության նիստ, որը վերջինն էր: Ըստ ընդունված որոշման՝ կառավարությունը մեկնեց Մեղրի, իսկ Գ. Նժդեհը՝ ճակատ՝ վերջին կարգադրություններն անելու համար:

Գորիս ժամանած Զանգեզուրի արտակարգ կոմիսար և Խորհրդային Հայաստանի կառավարության անդամ Դ. Տեր-Սիմոնյանը դիմեց «Ղափանի գյուղացիներին և Նժդեհի զինվորներին»՝ հետևել իրենց եղբայրներին և չդիմադրել կարմիր բանակին:

---

[29] ԲՀԱ, Երևան, 1978, թիվ 1, էջ 159-160:

Հայաստանի կառավարության անունից նա ներում խոստացավ բոլոր նրանց, ովքեր կընդունեին խորհրդային իշխանությունն առանց դիմադրության։

Հանքերում, որը Ղափանի շրջանի պաշտպանության կենտրոնն էր, կազմակերպվեց որոշ դիմադրություն՝ նահանջի ճանապարհը ապահով պահելու համար։ Այդտեղից Գ. Նժդեհը ուղևորվեց շատ հարազատ Խուստուփ, որտեղ նրան հայտնեցին Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հուլիսի 2-ի վերոհիշյալ բավական ուշացած հաշտության միջնորդության մասին։ Միայն այդ ժամանակ՝ հուլիսի 7-ին, Գ. Նժդեհը հիշեց և հարկ համարեց անդրադառնալ Ա. Մյասնիկյանի կառավարության հունիսի 13-ի հրապարակային հայտարարությանը։ Գ. Նժդեհի խիստ ուշացած պատասխանը, սակայն, խորհրդային իշխանության համար որևէ նշանակություն ունենալ չէր կարող։

Նահանջի ճանապարհը փակելու և Գ. Նժդեհի ուժերի մնացորդներին լրիվ ջախջախելու համար դեպի Մեղրի կարմիր զորքերը հարձակում գործեցին արևմուտքից (Օրդուբադի կողմից) և արևելքից (Ադրբեջանից)։ Տեղի ունեցան ուժեղ կռիվներ, և նահանջողներին հաջողվեց Մեղրին պահել ազատ։

Զանգեզուրի գրավումը և խորհրդայնացումը փաստորեն ավարտված էին։ Հուլիսի 8-ին հետևեց առանձին կովկասյան բանակի ռազմահեղկոմի հրամանը, որը հայտնում էր «խորհրդային հանրապետությունների կարմիր զորքերի ճնշման տակ դաշնակ-մուսավաթական հակահեղափոխության» Պարսկաստան փախչելու մասին։ Իշխանությունն անցնում էր հեղկոմներին։

Գ. Նժդեհը և Լեռնահայաստանի կառավարությունը ապստամբ զորքերի մնացորդների հետ՝ թվով 400 մարդ (հետևակային ու հեծյալ), ձեռքի տակ ունենալով որոշ թվով հրանոթներ, հուլիսի 7-ին Ղաթարի գործարաններից հասել էին Մեղրի, ապա փոխադրվել Պարսկաստան։

Կարմիր բանակի զորամասերը հուլիսի 13-ին մտան Մեղրի, որը Գ. Նժդեհի վերջին հենակետն էր։ Առանձին վայրերում փոքր ընդհարումներ եղան ևս երկու օր, որոնք մղվում էին Ղափանի վաշտերի կողմից՝ Գերասիմ Աթաջանյանի գլխավորությամբ։

Հուլիսի 15-ին զինվորական կոմիսար Ի. Սվիրիդովը առանձին կովկասյան բանակի անունից ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանին զեկուցեց «Զանգեզուրը դաշնակցական հակահեղափոխությունից լիովին մաքրելու և բանվորագյուղացիական իշխանությունների լիակատար հաղթանակի մասին»[30]։

Զանգեզուրցիների կռիվը, ինչպես գրել է այդ պայքարի առաջնորդ Գ. Նժդեհը, ո՛չ կուսակցական էր, ո՛չ էլ դասակարգային. «Հայկական լեռնաշխարհը Ադրբեջանին կցելու տարիներով կրկնվող փորձերը՝ ահա թե ինչն էր մեր բազուկը զինել և մեզ լեռները հանել»[31]։

Զանգեզուրի ինքնապաշտպանությունն ունի պատմական նշանակություն։ Դրա շնորհիվ է նաև, որ հայրենի այդ երկրամասն այսօր Հայաստանի կազմում է։

---

[30] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան…, էջ 544։

[31] Նժդեհ Գ., Երկեր, հ. 2, էջ 8։